

13 - 19 Յունիս

Օդը յստակ:

Տաքութիւնը կ'աւելանայ. արիւնային մարդոց համար բարկանալու եղանակ չէ... թող որ Փրկիչն⁴ ալ լեցուն է:

Առեւտուրները կդադարին:

Ամեն մարդ ծովու բաղանիք վարձելու յետեւ է:

Երկաթուղոյ մը շինութիւնները մեծ փութով առաջ կտարուին:

Մարդուն մէկը պարտքը կը վճարէ այն օրն՝ յորում տալ խոստացած էր: Խեղճ մարդ...

20 - 27 - 30 Յունիս

Պիտի ճաթինք տաքէն:

Անվնաս փորհարութիւն մը կայ շատ մարդոց մէջ:

Ամերիկան նոր գիւտ մը կ'ընէ: Շոգենաւի մը ածուխը կէս ճամբան կհատնի եւ չկրնար ճամբան շարունակել:

Ամսոյս մէջ ծնող մանչերը խելացի կ'ըլլան, իսկ աղջիկները դաշնակահար:

ՅՈՒԼԻՍ

1 - 4 Յուլիս

Տաքութիւնը սաստիկ է:

Վանքի մը մէջ քանի մը կրօնաւորներ պայմանագրութիւն կկնքեն՝ սիրով եւ միաբանութեամբ վանքը կողոպտելու համար:

Թերթ մը կդադրեցնէ իւր հրատարակութիւնը:

Ժողովոյ մը անդամներուն մէջ երկպառակութիւն:

Տեսէ՛ք սա ցնդած պառաւը, հարս կ'ըլլայ, երեսուն տարու երիտասարդի մը հետ կկարգուի:

5 - 11 Յուլիս

Տաքութիւնը միեւնոյն է:

⁴ Կ. Պօլսոյ Ս. Փրկչի ազգային հիւանդանոցը ու յիմարանոցը: